



**«ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ»**  
*Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթ*



**“Legal Guide” NGO**

## **ԴԱՏԱՎՈՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ**

**«Ճշմարիտ հավատք» կրոնական  
կազմակերպությունն  
ընդդեմ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Գործը**

**Քննվում է Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի Կողմից**

**Երևան 2009թ.**

*Հուլիսի 20-ին ընդունված խիստ գաղտնի է.*

*Այն նշակվել է բացառապես «Ինտերակտիվ մարդու իրավունքներ»  
Եվրոպական իրավունքի 2009-2010թթ. դատախաղ-մրցույթի դատավորների ծանոթացման  
համար.*

Սույն Դատական հուշագիրը մշակվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թվականների դատախաղ-մրցույթի ծրագրի շրջանակներում: 2009-2010 թվականների Մրցույթի իրականացմանը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Եվրոպական Միությունը՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում:

Դատական հուշագրում ներառված դրույթներն ու վերլուծությունները կատարվել են «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թվականների դատախաղ-մրցույթի համար: Սույն փաստաթղթում արծարծված տեսակետները մշակվել են. հիմք ընդունելով «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թվականների դատախաղ-մրցույթի դատական գործի փաստերը, մրցույթի նպատակներն ու խնդիրները: Սույն դատական հուշագրում ներառված ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես կոնկրետ դեպքերի համար իրավաբանական խորհրդատվություն: Սույն Դատական հուշագիրը և դրանում ներառված ցանկացած մեկնաբանություն ունի բացառապես կրթական նպատակ:

Երևան, 2009թ. Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	4
1. Ներածություն.....	4
2. Մրցություն որպես դատավոր հանդես գալու իրավունքը .....	5
3. Դատավորների կազմը .....	6
4. Բանավոր փաստարկների ներկայացման համար թիմերին հատկացված ժամանակը և դատավորների հայեցողությամբ հատկացված ժամանակի ավելացումը .....	8
5. Ընդհանուր դրույթներ տույժերի կիրառման և դրանց առանձնահատկությունների մասին .....	9
ՄԱՍ II. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	10
1. Արդար դատաքննության իրավունքը .....	10
2. Մտքի, խղճի եւ կրոնի ազատություն .....	13
3. Խտրականության արգելումը .....	17
ՄԱՍ III. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .	21
1. «Դինումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ.....	21
2. «Դինումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ.....	24
3. «Դինումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ.....	27

# ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1. Ներածություն

Սույն Դատական Զուլագրի (այսուհետ «Զուլագիր») նպատակն է «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թթ. դատախազ-մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) դատավորներին ծանոթացնել մրցույթի դատական գործի մանրամասներին (այսուհետ՝ «Գործ» կամ «Դատական Գործ»), Գործին վերաբերող փաստերին և իրավական հիմնախնդիրներին: Զուլագրի հետ մեկտեղ Դատավորներին կտրամադրվի նաև Դատական գործն ու «Եվրոպական իրավունքի դատախազ մրցույթի Դատական գործի վերաբերյալ պարզաբանումներն ու ուղղումները»: «Եվրոպական իրավունքի դատախազ մրցույթի Դատական գործի (այսուհետ՝ «Պարզաբանումներ և ուղղումներ») նպատակն է հստակություն մտցնել Դատական գործում ներառված այն հարցերում, որոնք Մրցույթի իրականացման նախնական փուլում վեր են հանվում Մրցույթի մասնակիցների կողմից: Պարզաբանումներն ու ուղղումները չեն անդրադառնում այն հարցերին, որոնք կմեկնաբանեն կամ կհստակեցնեն դատական գործում ամրագրված այն փաստերն ու իրադարձությունները, որոնց կապակցությամբ իրավական մեկնաբանություններ և լուծումներ տալը Մրցույթի մասնակից թիմերին առաջադրված խնդիրն է: Պարզաբանումներն ու ուղղումները հանդիսանում են Դատական գործի անբաժանելի մասն ու դրանք անհրաժեշտ է դիտարկել միասին:

«Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթի կազմակերպիչն է «Երիտասարդական նվաճումներ» կրթական հասարակական կազմակերպությունը՝ «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

**Սույն Զուլագրի բովանդակությունը խիստ գաղտնի է և այն նախատեսված է միայն Մրցույթի դատավորների համար: Սույն Զուլագրի փոխանցումը Մրցույթի մասնակից թիմերին արգելվում է: Այս պահանջը խախտող թիմը կամ թիմի անդամը կենթարկվի Մրցույթի Պաշտոնական կանոններով նախատեսված տույժի:**

Մրցույթը բաղկացած է երկու մակարդակից՝ Գրավոր մրցափուլ և Բանավոր մրցափուլ: Բոլոր մրցափուլերը կընթանան Մրցույթի Պաշտոնական կանոնների և Պաշտոնական ժամանակացույցի համաձայն: Գրավոր մրցափուլը բաղկացած է գրավոր փաստարկների, իսկ բանավոր մրցափուլը՝ բանավոր փաստարկների ներկայացումից և գնահատումից: Մրցույթի ժամանակ ապահովվում է մասնակից թիմերի ինքնուրույն գաղտնիությունը: Մրցույթի բոլոր մակարդակներում կիրառվող միակ պաշտոնական լեզուն հայերենն է:

Դատական գործը մտացածին է և վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքների, այդ թվում արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես դատարանի մատչելիությանն ու կողմերի հավասարության սկզբունքի, կրոնի ազատության իրավունքի եւ խտրականության արգելման ենթադրյալ խախտումներին: Դատական գործով պատասխանող մասնակից պետությունը Հայաստանի Հանրապետությունն է և Գործի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում մինչև 2009 թվականի մայիսի 31-ը գործող օրենսդրությունը:

Դատական գործը լավելու է Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանում՝ (այսուհետ՝ «Դատարան») կամ «Եվրոպական դատարան») Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա») կամ «Կոնվենցիա») և Դատարանի Կանոնակարգի համաձայն: Դատական գործում ներառված իրավական հիմնախնդիրները ներկայացված են այնպես, որ մրցույթի մասնակիցներին հնարավորություն տրվի անհրաժեշտ փաստարկներ ներկայացնել մի կողմից Դիմումատուի, մյուս կողմից Պատասխանող մասնակից պետության դիրքորոշումն հիմնավորող իրավական համապատասխան դրույթների վերաբերյալ՝ դրանք մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի դրույթների և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների համապատասխան:

## ***2. Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքը***

Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքի, դատավորների կազմի վերաբերյալ հարցերն ու մրցույթի գնահատման կարգն ու եղանակները սահմանված են Մրցույթի Պաշտոնական կանոններով: Սույն Զուշագիրը կանդորադառնա վերը նշված հարցերի համառոտ նկարագրին՝ դատավորներին Մրցույթի իրականացման ընդհանուր կարգին և կանոններին ծանոթացնելու նպատակով:

Դատախազը հնարավորինս մոտեցված կլինի Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից իրականացվող իրական դատավարության ընթացակարգին: Դատավորները կկրեն համապատասխան հանդերձանք, կպահպանվի դատարանում ընդունված վարվելակարգը: Ի լրացումն վերը նշվածին, Մրցույթի իրականացման ընթացքում դատավորներն ու մասնակից թիմերը պետք է նաև առաջնորդվեն Մրցույթի Պաշտոնական կանոններով, սույն Զուշագրով, Մրցույթի Պաշտոնական ժամանակացույցով:

Մրցույթի ցանկացած փուլում և մակարդակում բացառվում է որևէ դատավորի մասնակցությունը Մրցույթին, ով կապ ունի այն ԲՈՒՅ-ի հետ, որը թիմ է ներկայացրել 2009-2010 թվականների Մրցույթում մասնակցելու համար, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է վերջինիս հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է Պաշտոնական կանոններով և թույլատրվում է Մրցույթի նախագահի կողմից: Դատավորի՝ տվյալ ԲՈՒՅ-ի շրջանավարտը լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս, որպես դատավորի մասնակցությունը Մրցույթին խախտում որակելու համար:

Դատավորները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն տվյալ թիմի բանավոր ելույթը գնահատելուց, եթե նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ կամ կապ ունեն տվյալ ԲՈՒՅ-ի կամ տվյալ թիմի որևէ անդամի հետ և եթե այդ կապը կարող է ազդել նրանց անկողմնակալության կամ անաչառության վրա կամ ավելորդ անճշտությունների տեղիք տալ: Դատավորները չպետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց՝ տվյալ թիմի անդամին պարզապես ծանոթ լինելու կամ տվյալ ԲՈՒՅ-ի հետ որոշակի հարաբերություններ ունենալու դեպքում:

### 3. *Դատավորների կազմը*

Մրցույթի Գրավոր մրցափուլը կանցկացվի երկու, իսկ Բանավոր մրցափուլը՝ երեք դատավորների կազմով, բացառությամբ բանավոր մրցափուլի եզրափակիչ փուլի, որը կանցկացվի հինգ դատավորների կազմով: Բացառիկ դեպքերում Մրցույթի նախագահը կարող է թույլ տալ երկու դատավորի կազմով Բանավոր մրցափուլի, բացառությամբ եզրափակիչ փուլի, իրականացումը: Մրցույթի ոչ մի փուլում որևէ բուհի կամ ֆակուլտետի խորհրդատու կամ մարզիչ իրավունք չունի հանդես գալ որպես դատավոր: Հնարավորինս պետք է բացառվի թիմի կրկնակի քննումը միևնույն դատավորի կողմից: Եթե որևէ դատավոր ստիպված է նույն թիմի ելույթը երկու անգամ գնահատել, ապա Մրցույթի կազմակերպիչը պետք է ապահովի, որ այդ թիմը հանդես գա տարբեր կողմերից (Դիմումատու/ Պատասխանող մասնակից պետություն):

Եզրափակիչ կամ կիսաեզրափակիչ մրցափուլերում Մրցույթի նախագահը կարող է դատավորներին թույլ տալ գնահատել մեկ կամ մեկից ավելի թիմերի, որոնց նրանք նախկինում դատել են՝ ելնելով այն հանգամանքից, որ դա կնպաստի Մրցույթի շահերին:

Յուրաքանչյուր մրցափուլում դատավորները պետք է միմյանցից անկախ ստուգեն (յուրաքանչյուր դատավորի կտրամադրվի անհատական գնահատման թերթիկ, որտեղ դատավորը կնշի թիմի անդամների ելույթների գնահատականները՝ հիմք ընդունելով սեփական համոզմունքներն ու անձնական մասնագիտական գնահատականը) թիմերի Գրավոր փաստարկները և գնահատեն բանավոր ելույթները: Դատավորները մասնակից թիմերի ելույթները գնահատելիս պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

- Դատավորները մասնակից թիմերի ելույթները գնահատելիս պետք է գնահատեն մասնակից թիմերի այն **բանախոսների անհատական ելույթները**, որոնք տվյալ մրցափուլում հանդես են գալիս ելույթով և ներկայացնում են համապատասխան փաստարկներ: Դատավորները իրավասու չեն ընդհանուր մոտեցում ցուցաբերել թիմերին՝ առանց հաշվի առնելու թիմերի ներկայացուցիչների կողմից ներկայացված անհատական փաստարկների որակն ու իրավական հիմնավորվածությունը:
- Դատավորները՝ մասնակից թիմերի ներկայացուցիչների ելույթները գնահատելիս պետք է իրավական գնահատական տան Մրցույթի Դատական գործի լուծման կապակցությամբ թիմի դիրքորոշմանը և ներկայացրած փաստարկներին:
- Դատավորները թիմերի ելույթները գնահատելիս պետք է հաշվի առնեն թիմերի կողմից ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը, հետևողականությունը և Եվրոպական կոնվենցիայի նորմերին և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներին համապատասխան մեկնաբանումը: Դատավորները գնահատելիս պետք է հիմնվեն Մրցույթի Դատական գործի վերաբերյալ Կոնվենցիայով սահմանված նորմերի և սկզբունքների համապատասխան լուծումներ տալու՝ թիմերի դրսևորած հմտությունների և կարողությունների վրա:
- Համաձայն Մրցույթի դատական գործի և Պաշտոնական կանոնների՝ Մրցույթի մասնակիցները պետք է անդրադառնան բացառապես **Մրցույթի Դատական գործում ներկայացված փաստերին և Գործի IV գլխում սահմանված հարցերին**: Դատավորները՝ թիմերին հարցադրումներ կատարելիս և նրանց ելույթը գնահատելիս պետք է հիմք ընդունեն Մրցույթի Դատական գործի IV գլխում սահմանված հարցերն ու Դատական գործում արծարծված փաստերն ու հանգամանքները: Ո՛չ մրցույթի մասնակիցները եւ ո՛չ էլ դատավորները իրավասու չեն նեղացնելու կամ լայնացնելու նշված հարցերի

**շրջանակը:** Թիմի մասնակցի կողմից նշված պահանջը խախտելու, ինչպես նաև Դատական գործի փաստերն աղավաղելու դեպքում դատավորը իրավասու է միջամտել նրա ելույթին և պահանջել անդրադառնալու բացառապես Մրցույթի Դատական գործի IV գլխում սահմանված հարցերին և գործի փաստերին: Թիմի մասնակիցները՝ դատավորի կողմից Մրցույթի Դատական գործի IV գլխում սահմանված հարցերից և Դատական գործի փաստերից տարբերվող հարցադրումներ անելու դեպքում իրավասու են չանդրադառնալ դրանց՝ այդ մասին դատավորին բանավոր ձևով հայտնելու պայմանով:

- Մրցափուլի ավարտից հետո Դատավորները իրավասու չեն թիմերին տեղեկացնելու իրենց անհատական կարծիքի կամ թիմի հավաքած ընդհանուր միավորների մասին, ինչպես նաև իրավասու չեն տարածելու այնպիսի տեղեկատվություն, որը կմատնանշի նրանց անհատական դիրքորոշումը և կպարզաբանի սույն Հուշագրի բովանդակությունը: Բացառություն են կազմում Մրցույթի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը, երբ մրցափուլերի վերջում դատավորները հրապարակավ մեկնաբանություններ և առաջարկություններ պետք է անեն թիմերին և կարծիքներ հայտնեն թիմերի բանավոր ելույթների վերաբերյալ, սակայն իրավունք չունեն հրապարակավ հայտնել թիմերի արդյունքները: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում դատավորները չպետք է տեղեկացվեն նախորդ փուլերում թիմերի հավաքած հանրագումարային միավորների մասին: Նրանց կողմից թիմերի գնահատումը պետք է անկախ լինի նախնական փուլերում թիմերի դրսևորած արդյունքներից: Այս առումով եզրափակիչ մրցափուլը տարբերվում է նախորդ մրցափուլերից: Եզրափակիչ մրցափուլում հանդես եկող թիմերի հանրագումարային միավորների թերթիկները կտրամադրվեն դատավորներին՝ իրենց հայեցողությամբ դրանք օգտագործելու համար: Տվյալ փուլի հաղթողի վերաբերյալ որոշումը կայացվում է գնահատող դատավորների ձայների մեծամասնությամբ: Փուլային միավորների թերթիկները լրացնելուց հետո կանցկացվի թիմերի բանավոր ելույթների հրապարակավ գնահատում: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում առկա է ևս մեկ տարբերություն եզրափակիչ փուլից: Տարբերությունը կայանում է նրանում, որ **դատավորները Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում գնահատում են յուրաքանչյուր բանախոսի ելույթը առանձին առանձին վերցրած, իսկ եզրափակիչ մրցափուլում դատավորները հաղթող թիմի վերաբերյալ որոշում են կայացնում ձայների մեծամասնությամբ:**
- Չի խրախուսվում թիմերի անդամներին զուտ տեսական բնույթի հարցեր տալ ինչպես եվրոպական կոնվենցիայի, այնպես էլ ազգային օրենսդրության վերաբերյալ: Թիմերի անդամների տեսական գիտելիքների իմացությունը խրախուսվում է ստուգել Կոնվենցիայի կամ ՀՀ օրենսդրության նորմերի միջև համեմատական վերլուծություն ենթադրող հարցադրումների միջոցով: Մրցույթը պետք է հնարավորինս նմանվի իրական դատարանի դահլիճի, որպեսզի առավելագույնս ապահովի մրցույթի մասնակիցների փորձի ձեռքբերումը:
- Չի խրախուսվում դատավորի կողմից հարցերի կենտրոնացումը թիմի մեկ մասնակցի կամ մեկ թիմի վրա: Մրցույթի հիմնական նպատակներից մեկն է թիմերին հավասար հնարավորություններ ընձեռել իրենց փաստարկներն ու դիրքորոշումները ներկայացնել դատարանին:

- Դատավորներին խորհուրդ է տրվում հարցերը պարզ ձևակերպել և խուսափել մեկնաբանություններ անել թիմի անդամի կողմից ներկայացված պատասխանի կապակցությամբ:
- Դատավորներին խորհուրդ է տրվում մասնակից թիմերին խնդրել բացատրել իր և հակառակորդի տեսակետների միջև առկա ակնհայտ հակասությունները կամ տարբերությունները՝ Եվրոպական կոնվենցիայի նորմերի և Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների համապատասխան:
- Մասնակից թիմերի կողմից թույլ իրավական փաստարկներ ներկայացնելը դատավորը չպետք է օգտագործի մրցույթի մասնակցի դեմ: Մյուս կողմից, եթե մասնակիցը սխալ է ձևակերպում օրենքը կամ սխալ է ներկայացնում որոշումը, կամ տեղյակ չէ կիրառելի նորմին, դատավորը պետք է դա մասնակցի ուշադրությանը ներկայացնի հարցերի միջոցով:
- Դատավորների կողմից «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալող հարցադրումները խրախուսվում են: Նման հարցերի միջոցով դատավորները կարող են որոշել մասնակից թիմերի կողմից կատարված հետազոտության խորությունն ու հստակությունը կոնկրետ հարցի լուծման կապակցությամբ:
- Եվրոպական կոնվենցիան, Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռները և Հայաստանի Հանրապետության կողմից մատնանաչված իրավունքների միջամտության համապատասխանությունը Կոնվենցիայի նորմերին այն հիմնական հարցերն են, որոնց պետք է անդրադառնան մասնակից թիմերը: Այս առումով խրախուսվում է, որպեսզի դատավորը ուսանողներին հնարավորություն չտա դեկլարատիվ բնույթի հայտարարություններ անել որոշակի նորմի խախտման կապակցությամբ, այլ թիմերից ակնկալել վիճարկվող ցանկացած նորմի խախտում ուղղակիորեն համադրել Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներով սահմանված իրավական նորմերի եւ չափանիշների հետ:

**4. Բանավոր փաստարկների ներկայացման համար թիմերին հատկացված ժամանակը և դատավորների հայեցողությամբ հատկացված ժամանակի ավելացումը**

Դատավորները թիմերի ելույթները գնահատելիս պետք է հիմք ընդունեն Պաշտոնական կանոններով սահմանված ժամանակն ու մրցափուլի անցկացման կարգը: Համաձայն այդ ընթացակարգի թիմերը իրենց ելույթները ներկայացնում են հետևյալ հերթականությամբ.

<i><b>Բանավոր փաստարկների հերթականությունը</b></i>	<i><b>ներկայացման կարգն ու</b></i>	<i><b>Թույլատրելի առավելագույն ժամանակը</b></i>
1. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին բանախոս		20 րոպե
2. Դիմումատուին ներկայացնող թիմի երկրորդ բանախոս		20 րոպե
3. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին բանախոս		20 րոպե
4. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի երկրորդ բանախոս		20 րոպե
5. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ		10 րոպե

բանախոս (պնդումների ներկայացում)

6. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ բանախոս (առարկությունների ներկայացում)

10 րոպե

Դատավորները կարող են իրենց հայեցողությամբ տաս (10) րոպեով երկարացնել յուրաքանչյուր թիմի ընդհանուր բանավոր ելույթի համար հատկացված հիսուն (50) րոպե ժամանակը: Սակայն պետք է հաշվի առնել, որ Պաշտոնական կանոնները բացառում են յուրաքանչյուր բանախոսի՝ 30 րոպեից ավել ելույթ ունենալու իրավունքը:

Հաշվի առնելով Մրցույթի սկզբունքները և Մրցույթի մասնակից թիմերի շահերը, այն է՝ հավասար ժամանակի առկայությունը յուրաքանչյուր թիմի կողմից իրենց բանավոր փաստարկները ներկայացնելու համար, դատավորները պետք է Պաշտոնական կանոնների համաձայն բոլոր թիմերին հավասար ժամանակ ընձեռեն իրենց փաստարկները ներկայացնելու համար:

Մրցույթի կանոնների համաձայն թիմերին հատկացված է սահմանափակ ժամանակ իրենց փաստարկները ներկայացնելու համար և այդ իսկ նկատառումով էլ դատավորներին խորհուրդ է տրվում խուսափել երկար հարցադրումներից այն դեպքում, երբ մասնակցին հատկացված ժամանակն արդեն մոտ է սպառվելուն:

## ***5. Ընդհանուր դրույթներ տույժերի կիրառման և դրանց առանձնահատկությունների մասին***

Թիմերի անդամների ելույթները գնահատելիս դատավորներն իրավունք չունեն տույժեր կիրառել՝ նվազեցնելով բանախոսների միավորները: Տույժերը միավորներից կարող է հանել միայն ԵՆ-ն՝ մրցափուլի արդյունքների ամփոփման ժամանակ:

## ՄԱՍ II. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս մասն անհրաժեշտ է դիտարկել Մրցույթի դատական գործի հետ մեկտեղ, որը Ձեզ կտրամադրվի սույն Հուշագրին կից:

«Իրավական վերլուծություն» մասի նպատակն է ներկայացնել Դատական գործի IV գլխում ներառված հարցերի կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից մշակված ընդհանուր սկզբունքներն ու այն իրավական նորմերը, որոնցով Դատարանն առաջնորդվում է նմանատիպ հարցեր բարձրացնող գործերով վճիռ կայացնելիս: «Իրավական վերլուծություն» մասը բաժանված է երեք հիմնական բաժինների. արդար դատաքննության իրավունքին, կրոնի ազատության իրավունքին և խտրականության արգելմանը:

### 1. Արդար դատաքննության իրավունքը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է՝

*1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:...*

Ինչպես նշված է Կոնվենցիայի 6-րդ հոդված 1-ին կետում՝ այն յուրաքանչյուրի համար երաշխավորում է արդար դատաքննության իրավունք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացվել է քրեական մեղադրանք: Եվրոպական դատարանն իր նախադեպերում այս հոդվածին տվել է լայն մեկնաբանություն՝ նշելով, որ այն ունի հույժ կարևորություն ժողովրդավարական հասարակության համար:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի միայն 1-ին կետն է, որ տարածվում է ինչպես քաղաքացիական այնպես էլ քրեական գործերի վրա: 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը տարածվում են միայն քրեական գործերի վրա: Հոդվածի ձևակերպումից պարզ է դառնում, որ այն չի վերաբերվում այն բոլոր քաղաքացիական գործերին, որոնցում քաղաքացին կարող է կողմ լինել. այլ վերաբերվում է միայն այն գործերին, որոնցում որոշվում են մարդու «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Այս առումով կարևոր է հասկանալ թե «քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններ» արտահայտությունը ինչ է նշանակում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

**ա) Ի՞նչ է նշանակում արդարացի դատաքննության իրավունք Եվրոպական կոնվենցիայի իմաստով**

Եվրոպական կոնվենցիան սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի արդարացի դատաքննության իրավունք: Արդարացի դատական քննությունը միջազգային իրավունքների նորմ է: Արդարացի դատաքննությունը հասկացությունը ներառում է արդար դատական քննության մի շարք ասպեկտներ, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- դատարանի մատչելիության իրավունքը,
- բողոքարկման իրավունքը,
- կողմերի հավասարության սկզբունքը,
- Մրցակցային դատական քննության իրավունքը,
- դատաքննությանը ներկա գտնվելու իրավունքը:

Մրցույթի դատական գործի նպատակների համար կարելուր նշանակություն ունի *կողմերի հավասարության սկզբունքն ու դատարանի մատչելիության իրավունքը*:

**Բ) Ի՞նչ է նշանակում կողմերի հավասարության սկզբունք եւ դատարանի մատչելիության կոնվենցիայի իմաստով**

Ինչպես նշվեց վերը արդարացի դատական քննության իրավունքը ներառում է կողմերի հավասարության սկզբունքն ու դատարանի մատչելիության իրավունքը: Ստորել ներկայացված են Եվրոպական Դատարանի կողմից կողմերի հավասարության սկզբունքի ու դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ սահմանած սկզբունքներ.

Եվրոպական դատարանը *De Haes and Gijssels v Belgium*-ի գործում սահմանել է, որ կողմերի հավասարության սկզբունքը.

*«... նշանակում է, որ դատաքննության ժամանակ կողմերը պետք է ունենան ողջամիտ հնարավորություններ իրենց գործը դատարանին ներկայացնելու համար այնպիսի պայմաններում, որոնք նրանց չեն դնի իր հակառակորդի համեմատ ավելի անբարենպաստ վիճակում»<sup>1</sup>:*

Չետեւաբար կողմերի միջեւ պետք է պահպանվի արդարացի հավասարակշռություն: Դատարանը բազմիցս նշել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետն իրավաբանական օգնության կարիք ունեցող անձանց տրամադրում է երաշխիքներ ներպերական դատարանների առջեւ, չնայած այդ երաշխիքների շրջանակն ավելի նեղ է, քան քրեական գործերով: Դատարանը *Golder v. the United Kingdom* - ի<sup>2</sup> գործում սահմանել է, որ նախ եւ առաջ կողմերի համար պետք է մատչելի լինի դատարանը, երբ որոշվում են նրանց քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները: Չետեւաբար իրավաբանական օգնության հարցը պետք է դիտարկել որպես դատարանի մատչելիության իրավունքի բաղադրիչ:

*Airey v. Ireland*-ի<sup>3</sup> գործում Եվրոպական դատարանը սահմանել է, որ դիմումատուին իրավաբանական օգնություն չտրամադրելը կարող է առաջացնել դատարանի

1 Տե՛ս *De Haes and Gijssels v Belgium* գործով Եվրոպական դատարանի 1997թ. փետրվարի 24-ի վճիռը:

2 Տե՛ս *Golder v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 1995թ. փետրվարի 21-ի վճիռը:

3 Տե՛ս *Airey v. Ireland* գործով Եվրոպական դատարանի 1979թ. հոկտեմբերի 9-ի վճիռը:

մատչելիության իրավունքի խախտում, եթե իրավաբանական օգնությունը կարելու է դատարանի արդյունավետ մատչելիությունն ապահովելու համար: Նույն գործում դատարանը սահմանել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը երբեմն կարող է պետությանը հարկադրել փաստաբանի ծառայություններ տրամադրել, եթե այդ օգնությունն անհրաժեշտ է դատարանի արդյունավետ մատչելիությունն ապահովելու համար՝ թե՛ այն դեպքերում, երբ իրավաբանական ներկայացուցչությունը տրամադրվել է պարտադիր հիմունքներով, ինչպես մի շարք մասնակից պետությունների ներպետական օրենսդրությամբ նախատեսված է տարաբնույթ դատական վեճերի համար, թե՛ դատավարության կամ տվյալ գործի բարդության նկատառումներից ելնելով: Դատարանը *Airey v. Ireland*-ի գործում էական է համարել այն հանգամանքը, թե արդյոք դիմումատուն կարող էր իր գործը պատշաճ եւ արդյունավետ ներկայացնել առանց փաստաբանի օգնության, հաշվի առնելով նաեւ գործի բարդությունը ու մի շարք այլ հանգամանքներ:

Միաժամանակ *R.D. v. Poland*<sup>4</sup>-ի գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ դատարանի մատչելիության ապահովման պարտավորությունն իրացնելիս պետությունը պետք է, բացի դրանից, հետեւողականություն ցուցաբերի՝ այդ անձանց ապահովելով 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքից օգտվելու իրական ու արդյունավետ հնարավորություն:

*Bertuzzi v. France*<sup>5</sup>-ի գործում Եվրոպական դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է արձանագրել այն հիմքով, որ դիմումատուն չի ունեցել դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորություն, քանի որ որակյալ փաստաբանները հրաժարվել էին հանդես գալ կողմի անունից:

### **Պետության *ratione personae* պատասխանատվությունը՝ համաձայն Կոնվենցիայի**

Դատարանն իր մի շարք վճիռներում սահմանել է, որ անդամ պետությունները պատասխանատու են իրենց մարմինների գործողությունների կամ անգործության համար: Ինչ վերաբերում է կոնկրետ այս Մրցույթի դատական գործին, ապա հատկանշական է, որ համաձայն «Փաստաբանության» մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի.

*Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման եւ փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:*

Միաժամանակ հարկ է նշել, որ կոնկրետ գործի վարումը, ներառյալ փաստաբանի մատուցած ծառայությունների համար փոխհատուցման հարցը, վստահորդի ու փաստաբանի միջեւ հարաբերությունների խնդիր է:

Սակայն Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ Կոնվենցիան պաշտպանում է ոչ թե տեսական ու պատրանքային, այլ իրական ու արդյունավետ իրավունքները: Դա հատկապես վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում արդար դատաքննության իրավունքի զգալի դերակատարությունը<sup>6</sup>: Դատարանը նաեւ իր մի շարք վճիռներում սահմանել է, որ

<sup>4</sup> Տե՛ս *R.D. v. Poland* գործով Եվրոպական դատարանի 2001թ. դեկտեմբերի 18-ի վճիռը:

<sup>5</sup> Տե՛ս *Bertuzzi v. France* գործով Եվրոպական դատարանի 2003թ. վճիռը:

<sup>6</sup> Տե՛ս օրինակ *Airey v. Ireland* գործով Եվրոպական դատարանի 1979թ. հոկտեմբերի 9-ի վճիռը:

անհմաստ կլինեն, եթե 6-րդ հոդվածի 1-ին կետը մանրամասն սահմաններ կոնկրետ գործի կողմերին տրամադրվող երաշխիքները՝ առանց պաշտպանելու դատարանի մատչելիության իրավունքը, որի միջոցով է հնարավոր լինում իրականում փաստացի օգտվել այդ երաշխիքներից<sup>7</sup>:

Դատարանը նաև նշում է, որ կարող են լինել դեպքեր, երբ անդամ պետությունը չեզոք մնալու փոխարեն պետք է գործողություններ ձեռնարկի, երբ իրավասու իշխանությունների ուշադրությանն իրավաբանական ներկայացուցչության հետ կապված խնդիրներ են ներկայացվում, ինչպես նաև այն, թե ամբողջ դատավարության ընթացքում իրավաբանական ներկայացուցչությունը որքանով կարող է «գործնական» ու «արդյունավետ» լինել:

Դատարանը բազաթիվ վճիռներում, ինչպես օրինակ *Edificaciones March Gallego S.A. v Spain*<sup>8</sup>, *Garcia Manibardo v Spain*<sup>9</sup> գործերում սահմանել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ եւ կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել, քանի որ դատարանի մատչելիության իրավունքն ինքնին պահանջում է կանոնակարգում Պետության կողմից: Այս առումով անդամ պետություններն ունեն հայեցողության որոշակի շրջանակ եւ էական է այն հանգամանքը, որ կիրառվող սահմանափակումները չնվազեցնեն դատարանի մատչելիությունը կամ այնքան սահմանափակեն, որի հետուանքով խախտվի դատարանի մատչելիության սկզբունքի բուն էությունը: Այս առնչությամբ Դատարանը նաև սահմանել է, որ սահմանափակումները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համահունչ համարվելու համար պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ եւ այդ նպատակը պետք է համաչափ լինի կիրառվող միջոցին:

## **2. Մտքի, խղճի եւ կրոնի ազատություն**

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է.

*1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:*

*2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:*

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը ոչ միայն երաշխավորում է մտքի, կրոնի և խղճի ազատությունը այլ նաև դրանց ակտիվ արտահայտումը: Այս առումով զոյություն ունի հստակ կապ ու փոխհարաբերություն Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածների միջև: Չեռևաբար անհատների կամ մարդկանց խմբի կողմից մտքի, կրոնի և խղճի ազատություն իրավունքների իրականացումը հաճախ դիտարկվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի

<sup>7</sup> Տե՛ս օրինակ *Golder v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 1975թ. փետրվարի 21-ի վճիռը.

<sup>8</sup> Տե՛ս *Edificaciones March Gallego S.A. v Spain* գործով Եվրոպական դատարանի 1998թ. փետրվարի 19-ի վճիռը.

<sup>9</sup> Տե՛ս *Garcia Manibardo v Spain* գործով Եվրոպական դատարանի վճիռը:

լույսի ներքո, եթե իհարկե խոսք չի գնում «համոզմունքների արտահայտման» մասին: *Arrowsmith v. the United Kingdom*-ի գործով Հանձնաժողովը սահմանեց, որ համոզմունքների արտահայտման եզրույթը չի կարելի մեկնաբանել որպես «ցանկացած գործողություն, որը պայմանավորված է կրոնով կամ հավատով, կամ կրում է դրանց ազդեցությունը»<sup>10</sup>: Համոզմունքների «արտահայտումը» տարբերվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվող համոզմունքների և գաղափարների արտահայտման իրավունքից, և ենթադրում է ինչպես անհատական այնպես էլ խմբակային գործողություններ (օրինակ, երբ անհատները ձգտում են համոզել այլոց փոխել իրենց հավատը և այլն):<sup>11</sup>

*Murphy ընդդեմ Ireland*-ի գործով, Եվրոպական դատարանն անդրադարձավ այն հարցին, թե ինչ չափանիշներից ելնելով պետք է որոշվի այս կամ այն դեպքում Կոնվենցիայի 10 և 9 հոդվածների կիրառելիությունը: Խնդիրը կրկին կայանում էր նրանում, որպեսզի որոշվեր արդյոք խոսքը գնում է համոզմունքների արտահայտման մասին թե ոչ: Այդ գործով իր որոշման մեջ Դատարանը նաև մի կարևոր հանգամանքի անդրադարձավ, որը հավասարապես կիրառելի կարող է լինել ինչպես 10-րդ այնպես էլ 9-րդ հոդվածի համար. Դատարանը կարևոր համարեց այն հանգամանքը, որ դիմումատուի նկատմամբ կիրառված «սահմանափակումը» չէր բացառում իր համոզմունքները արտահայտելու նրա հնարավորությունը, քանի որ բացի համոզմունքները արտահայտելու արգելված միջոցից գոյություն ունեին նաև այլ գործնական հնարավորություններ արդյունավետորեն տարածելու ու արտահայտելու իր գաղափարները, համոզմունքներն ու կարծիքը<sup>12</sup>:

Կարևոր է որոշել, թե որքան առաջ կարող է գնալ պետությունը սահմանափակելով արտահայտվելու ազատությունը, որպեսզի պաշտպանի այս կամ այն հավատքի հետևորդների կրոնական համոզմունքները: Եվրոպական դատարանն իր վճիռներով<sup>13</sup> հստակ սահմանել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է քննադատող, վրդովեցնող և ցնցող խոսքը և որ այս կամ այն հավատքի հետևորդները պետք է պատրաստ լինեն իրենց գաղափարների առնչությամբ քննադատություն լսելուն: Այնուամենայնիվ, Կոնվենցիան չի պաշտպանում վիրավորական խոսքը և առավել կարևոր հարցը կայանում է նրանում, որպեսզի ճիշտ որոշվի քննադատության և վիրավորանքի միջև եղած սահմանը:

*Սեյնթլուդոնների եկեղեցին և նրա 128 անդամներն ընդդեմ Շվեդիայի գործով*<sup>14</sup> Հանձնաժողովը սահմանեց, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը այս կամ այն կրոնի կամ հավատքի հետևորդներին չի ազատում քննադատության ցանկացած ձևից, քանի դեռ այդ քննադատությունը չի վտանգել կրոնի ազատությունը. պետական մարմինների պարտավորությունն այս դեպքում կայանում է նմանատիպ վարքագիծը թույլ չտալու մեջ:

Չնայած որ այդ գանգատով Հանձնաժողովը խախտում չարձանագրեց, սակայն մի քանի շատ կարևոր սկզբունքներ ամրագրեց.

- կրոնի կամ հավատքի հետևորդների գաղափարների ու համոզմունքների քննադատությունը չի կարող անսահման լինել և չի կարող վտանգել կրոնի ազատության իրավունքի էությունը,

<sup>10</sup> St v Arrowsmith v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 7050/75 (1978) DR19, էջ. 5.

<sup>11</sup> Freedom of thought, conscience and religion. A guide to the implementation of Article 9 of the ECHR. Jim Murdoc. Human rights handbook No.9, p 15.

<sup>12</sup> Freedom of thought, conscience and religion. A guide to the implementation of Article 9 of the ECHR. Jim Murdoc. Human rights handbook No.9, p 51.

<sup>13</sup> Handyside v. the United Kingdom, (1976) Series A no. 24, at para. 49.

<sup>14</sup> Appl. no. 8282/78, Church of Scientology v. Sweden, (1980) DR21

- պետությունն ունի պարտավորություն թույլ չտալ, որպեսզի այնպիսի վարքագիծ դրսևորվի, որը կվտանգի կրոնի ազատության իրավունքը,
- Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման առկայության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք դիմումատուին ունեցել է իր համոզմունքները և հավատը գործնականում և արդյունավետորեն արտահայտելու հնարավորություն:

Ինչպես վերը նշեցինք, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում էր կրոնի ազատության իրավունքի միջամտության թույլատրելի սահմանները. ընդ որում այդ մասը վերաբերում է միայն կրոնի կամ համոզմունքների արտահայտման իրավունքին<sup>15</sup>:

Որպեսզի միջամտությունը այդ իրավունքին լինի իրավաչափ պետք է միաժամանակ առկա լինեն հետևյալ պայմանները.

- միջամտությունը պետք է սահմանված լինի օրենքով,
- միջամտությունը պետք է իրավաչափ նպատակ հետապնդի՝ հասարակական անվտանգություն, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն, և
- անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Տվյալ դեպքում միջամտության խնդիրը պետք է դիտարկել նաև Կոնվենցիայի 9-րդ հոդվածի շրջանակներում պետության դրական պարտավորության առկայության տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ պետության դրական պարտավորությունն այդ հոդվածի շրջանակներում կայանում է նրանում, որ ապահովվի կրոնի ազատության իրավունքի իրականացումը բազմակարծության և հանդուրժողականության մթնոլորտում: Դրական պարտավորությունների առկայության խնդիրը որոշվում է յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով և ամեն անգամ այդ հարցը որոշելի դատարանը պետք է նպատակ ունենա արդարացի հավասարակշռություն ապահովել հանրության շահերի և կրոնի ազատության իր իրավունքն իրականացնող անձանց կամ խմբերի շահերի միջև<sup>16</sup>:

Եթե դիտարկենք Կոնվենցիայի 1-ին եւ 9-րդ հոդվածները, ապա նախ եւ առաջ գործ ունենք պետության դրական պարտավորության հետ՝ չմիջամտել 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների իրականացմանը: Միեւնույն ժամանակ Կոնվենցիան նաեւ պետության վրա պարտավորություն է դնում ակտիվ քայլեր ձեռնարկել Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է դիտարկել այն հարցը թե արդյոք այդպիսի դրական պարտավորություն տվյալ դեպքում ծագում է թե ոչ: Եվրոպական դատարանն այս հարցի կապակցությամբ հաշվի է առնում հանրության ու անհատի իրավունքների ու շահերի միջեւ արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունը:

Ընդ որում գնահատելով պետության կողմից իր դրական պարտավորությունը կատարած լինելու հանգամանքը, Եվրոպական դատարանը հստակ տարանջատում է այն դեպքերը երբ խոսք է գնում իր դրական պարտավորության շրջանակներում՝

- պետության կողմից ձեռնարկված քայլերի, եւ

<sup>15</sup> Taking a Case to the European Court of Human rights. Philip Leach Second Edition. p. 320

<sup>16</sup> Appl. nos 33490/96 and 34055/96, Dubowska and Skup v. Poland, (1997) DR89, 156

- պետության կողմից անգործություն ցուցաբերելու կամ բավարար միջոցներ չձեռնարկելու մասին:<sup>17</sup>

«Օրենքով նախատեսված» պայմանի չափանիշները նույնն են, ինչ որ Կոնվենցիայի այլ հոդվածներով երաշխավորվող իրավունքների միջամտության առկայության թեստերում. որպես հիմնական օրինակ նշենք *Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործը, որտեղ Դատարանը հստակ սահմանել է թե ինչ է նշանակում «օրենքով նախատեսված»:

«Օրենքով նախատեսված» արտահայտությունից բխում են հետևյալ երկու պահանջները. առաջինը օրենքը պետք է միեւնույն չափով մատչելի լինի, քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Երկրորդ, նորմը չի կարող համարվել «օրենք» եթե այն ձեւակերպված չէ բավարար ճշտությամբ, որը թույլ կտա քաղաքացիներին դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նա պետք է հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում օգտվելով խորհուրդներից հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող է առաջացնել այդ գործողությունը ...»:

Առավել դժվար է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» չափանիշի գնահատումը: Այս չափանիշն ինքնին ենթադրում է հետևյալ պայմանների առկայությունը,

- միջամտությունը պետք է համապատասխանի սոցիալական սուր պահանջի. ընդ որում որքան ավելի ակնհայտ է ու սուր սոցիալական պահանջն, այնքան ավելի դյուրին է դառնում միջամտության իրավաչափությունը հիմնավորելը,
- միջամտությունը պետք է համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին,
- ունենա համապատասխան ու բավարար հիմնավորումներ:

Իսկ քանի որ Դատարանը չի կարող փոխարինել ներպետական դատարաններին, ապա ազգային մակարդակով որոշում կայացնող մարմիններն այնուամենայնիվ ունեն հայեցողության որոշ սահմաններ<sup>18</sup>:

Դատարանն ընդունում է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի գործողության ոլորտում որոշումներ կայացնելու առումով իր իրավասությունը սահմանափակված է այնքանով, որքանով որ, յուրաքանչյուր այդպիսի դեպքում որոշում կայացնելիս անհրաժեշտ է մեծապես հաշվի առնել տվյալ երկրի առանձնահատկությունները, որոնք հիմնականում պայմանավորված են երկրի պատմական, մշակութային և քաղաքական հանգամանքներով, և ներպետական մարմիններն առավել կոմպետենտ են նմանատիպ պարագայում որոշում կայացնելու առումով<sup>19</sup>:

Չետաքրքիր օրինակ կարող է հանդիսանալ *Լեյլա Ֆյորդերկրեյսը և 4-ն ընդդեմ Գերմանիայի գործը*<sup>20</sup>. այն անդրադառնում է վերը շարադրված հիմնականում բոլոր խնդիրներին (չնայած այն հանգամանքին, որ այդ գործում դիմումատուի նկատմամբ քննադատությունն իրականացվել է պետական մարմնի կողմից): Այդ գործով իր վճռում Դատարանը մասնավորապես գտավ, որ չնայած այն հանգամանքին, որ դիմումատուի նկատմամբ կատարված գործողությունները չեն հանգեցրել դիմումատուի գործունեության

<sup>17</sup> Freedom of thought, conscience and religion. A guide to the implementation of Article 9 of the ECHR. Jim Murdoc. Human rights handbook No.9, p 21.

<sup>18</sup> Freedom of thought, conscience and religion. A guide to the implementation of Article 9 of the ECHR. Jim Murdoc. Human rights handbook No.9, p 30.

<sup>19</sup> Տես օրինակ՝ Մերֆին ընդդեմ Իռլանդիայի գործը, կետ 51:

<sup>20</sup> CASE OF LEELA FÖRDERKREIS E.V. AND OTHERS v. GERMANY (Application no. 58911/00):

արգելքին, և որ դիմումատուի կրոնի ազատության իրավունքն իր բոլոր բաղադրիչներով շարունակել է գոյություն ունենալ, այն ոճը որով նկարագրվել է դիմումատուի կազմակերպությունը և գործունեությունը, կարող էին բացասական ազդեցություն ունենալ նրա համար: Հետևաբար Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված կրոնի ազատության իրավունքի միջամտություն, ընդ որում անկախ այն հանգամանքից, թե արդյոք «բացասական հետևանքներն» իրականում առկա են եղել, թե միայն դրանց առաջացման հնարավորությունն է եղել<sup>21</sup>:

Եվ վերջապես, այդ գործով Դատարանը ընդունելի է համարել նաև դիմումատուի պնդումներն առ այն, որ իր նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում է հանդիսանում:

### **3. Խտրականության արգելումը**

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը սահմանում է.

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կարևորագույն դեր ունի խտրականության բացառումը: Խտրականությունն արգելող դրույթներ են սահմանված մարդու իրավունքների ոլորտում ընդունված բոլոր միջազգային փաստաթղթերում: Բացի այդ, միջազգային հանրությունն ընդունել է նաև մի շարք կոնվենցիաներ, որոնք նպատակաուղղված են խտրականության բացառմանը: Նման կոնվենցիաների թվին են դասվում 1979 թ. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կոնվենցիային կից Կամընտիր արձանագրությունը, 1966 թ. «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը երաշխավորում է խտրականության արգելքը հետևյալ եզրերով.

«Սույն կոնվենցիայով շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

14-րդ հոդվածի իմաստով այն հիմքերը, որոնց առկայության դեպքում հնարավոր են խտրականության դրսևորումներ, ներառում են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությանը պատկանելու փաստը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ դրությունը: Եվրոպական դատարանն իր վճիռներում զարգացրել է «այլ դրություն» հասկացության չափանիշները, որոնք, մասնավորապես, ներառում են սեռական

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 84:

կողմնորոշումը, ամուսնական վիճակը, մասնագիտական կարգավիճակը, դատվածության փաստի առկայությունը, հաշմանդամ լինելու փաստը:

14-րդ հոդվածով երաշխավորված «խտրականություն» հասկացությունը չի ներառում բոլոր տիպի խտրականությունների բացառումը, այլ, ըստ էության, ենթադրում է երկու հիմնական բաղադրիչների առկայություն.

արգելված հիմքերից որևէ մեկով անձի հանդեպ դրսևորած վերաբերմունքը տարբերվել է նմանատիպ իրավիճակում հայտնված այլ անձի հանդեպ դրսևորած վերաբերմունքից, և նման տարբեր վերաբերմունքի համար չկա որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում:

Ապացուցման ծանրությունն ընկնում է դիմումատուի վրա: Եթե դիմումատուին հաջողվում է ապացուցել, որ իր հանդեպ կիրառվել է տարբեր մոտեցում, կառավարությունը պետք է ապացուցի, որ այդ մոտեցումն ունի «ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում»: Դատարանն այս հարցում սահմանել է երկու կարևոր չափանիշ. վերաբերմունքի այս տարբերությունը ծառայում է միանգամայն «օրինական նպատակի» և համաչափ է այդ նպատակին: Այլ կերպ ասած՝ պետությունը պետք է կարողանա ապացուցել, որ կիրառված դատական, վարչական և այլ միջոցները համաչափ են հետապնդվող նպատակին: Անհրաժեշտ է «արդարացի հավասարակշռություն» ապահովել հանրային շահի պաշտպանության և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների միջև:

Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Դատարանը 14-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտումների հարցը քննարկելիս հիմք է ընդունում հետևյալը.

#### Արդյո՞ք կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը

Դիմումատուն իրավունք չունի առանձին վիճարկել Կոնվենցիայի 14-րդ հոդվածը: Այս հոդվածը կարող է վկայակոչվել միայն այն դեպքում, երբ գանգատը վերաբերում է Կոնվենցիայով կամ Կոնվենցիային կից արձանագրություններով երաշխավորված որևէ այլ իրավունքի կամ իրավունքների խախտումներին: Այս սկզբունքն իր հստակ արտահայտությունն է գտել *Արդուլազիզը*, *Կաբալեսը* և *Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում, երբ դիմումատուների բողոքը վերաբերում էր այն փաստին, որ իրենց ամուսիններին իրավունք չի տրվել մուտք գործելու Միացյալ Թագավորություն այն դեպքում, երբ իրենք Միացյալ Թագավորությունում ժամանակավոր բնակության իրավունք ունեին: Եվրոպական դատարանը չի արձանագրել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) խախտում, սակայն արձանագրել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի հետ համատեղ:

Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի խախտում կարող է արձանագրվել նաև անկախ կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտման փաստից: Մասնավորապես, *Ֆրեթեն ընդդեմ Ֆրանսիայի* գործում, որը վերաբերում էր համասեռամուլի՝ երեխայի որդեգրման մասին դիմումի մերժմանը, Եվրոպական դատարանը վճռել է, որ չնայած 8-րդ հոդվածը չի ներառում որդեգրման իրավունքը, Ֆրանսիայի օրենսդրությունը թույլ է տալիս չամուսնացած բոլոր անձանց դիմելու որդեգրման համար, ինչն առնչվում է 8-րդ հոդվածին:

Եթե կիրառելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը, ապա արդյո՞ք առկա է խտրականության տարր

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության տարրերի առկայության փաստի ապացուցման համար անհրաժեշտ է համեմատության միջոցով հայտնաբերել և ցույց տալ տարբեր մարդկանց նկատմամբ տարբեր որոշումների կայացման փաստն այն դեպքում, երբ նրանք գտնվում են համանման իրավիճակներում: Դատարանն այս մոտեցումն առավել հստակ է զարգացրել *Ֆրեդին ընդդեմ Շվեդիայի* գործում<sup>22</sup>: Եվրոպական դատարանը *Բելջիան լինգուիսթիքն ընդդեմ Բելգիայի* 23 գործում նշել է. «...14-րդ հոդվածի իմաստով դիմումատուն է կրում պարտավորություն ապացուցելու հնարավոր խտրականության, մասնավորապես միևնույն կանոնի կիրառման տարբերությունները տարբեր կարգավիճակի և [անձանց] դեպքերում...»: Սա ապացուցելու համար անհրաժեշտ է հիմնավոր կերպով ներկայացնել, որ տարբեր մարդկանց նկատմամբ միևնույն հանգամանքների, փաստերի և իրավիճակների առկայությամբ կիրառվել է այլ մոտեցում, այդ թվում դատարանի կամ վարչական մարմնի որոշում: Նման տարբերության ապացուցմանը պետք է հետևի դրա հիմնավորումը, որը, որպես կանոն, դժվար գործընթաց է:

Եթե առկա է խտրականության տարր, ապա արդյո՞ք դա հետապնդում է իրավաչափ նպատակ

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր դեպքերում տարբեր որոշումների կայացումը միևնույն իրավիճակներում և հանգամանքներում կարող է հանգեցնել խտրականության: Նման տարբերության դեպքում խտրականության տարրերի առկայությունը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին թե արդյո՞ք խնդրո առարկա տարբերություններն ունեն «ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում»<sup>24</sup>: Այս հարցում Դատարանն առավել ուշադրություն է դարձնում պետություններին տրվող հայեցողության որոշակի սահմանին, քանի որ ազգային իշխանությունների դերը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում տարբերվում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կամ տարածաշրջանային մեխանիզմներից: Հիմնական տարբերությունն այն է, որ ազգային իշխանություններն են կրում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների սահմանափակումների օրինականության ապացուցման առաջնային պարտավորությունը: Սահմանափակման օրինականությունն ասելով հասկանում ենք սահմանափակման իրավաչափ նպատակ հետապնդելը, սահմանափակման համապատասխանությունը հրատապ հասարակական կարիքին և սահմանափակման անհրաժեշտ և համաչափ լինելը: Եվրոպական դատարանի վերահսկողական գործառնությունն այս հարցում կայանում է նրանում, որ այն դիտարկում է համապատասխան ներպետական ատյանների կողմից կատարված սահմանափակումների համապատասխանությունը Կոնվենցիայի պահանջներին և նորմերին<sup>25</sup>:

<sup>22</sup> Տե՛ս *Ֆրեդին ընդդեմ Շվեդիայի* գործով Եվրոպական դատարանի վճիռը (1991) 13 EHRR 784:

<sup>23</sup> Տե՛ս *Belgian Linguistics case* (No 2) (1979-80) 1 EHRR 252, կետ 9:

<sup>24</sup> Նույն տեղում, 1 EHRR, 241:

<sup>25</sup> Տե՛ս *Keir Starmer*, *European Human Rights Law. The Human Rights Act 1998 and the European Convention on Human Rights*, Leal Action Group, 1999, para 4.90, p. 187:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով խտրականության առկայության և դրա իրավաչափ նպատակ հետապնդելու հարցում Դատարանի մոտեցումը սահմանափակվում է կոնկրետ սահմանափակման անհրաժեշտ լինելու հանգամանքի բացահայտմամբ՝ հիմք ընդունելով գործի փաստերը, սահմանափակման իրավաչափ նպատակ հետապնդելն ու դրա համաչափ լինելու հանգամանքը, ինչն ուղղված է անհատի իրավունքների պաշտպանության և հասարակության շահերի միջև «արդարացի հավասարակշռություն» սահմանելուն:

**ՄԱՍ III. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն մասում կվերլուծվեն Դատական գործով «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերը ներկայացնող թիմերի կողմից Մրցույթում ներկայացվելիք հավանական փաստարկներն ու այդ կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներում արտացոլված հիմնական ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները: Վերլուծությունը կկատարվի Մրցույթի Դատական գործի համապատասխան կետերում ներառված Դիմումատուի և Պատասխանող մասնակից պետության խնդրանքի համապատասխան:

Դատավորներին խորհուրդ է տրվում չսահմանափակվել սույն մասում տրված վերլուծություններով և ուսումնասիրել նաև սույն Յուլայի II մասում Կոնվենցիայի 6-րդ, 9-րդ և 14-րդ հոդվածների վերաբերյալ վերլուծությունը ու դրանում նշված աղբյուրները:

**1. «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ**

<p>Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ Հայաստանի Հանրապետության կողմից հոդվածի տպագրությունը չարգելելը առաջացրել է Կազմակերպության անդամների Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված կրոնի ազատության իրավունքի խախտում:</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում առկա չէ, քանի որ Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով սահմանված իր հայեցողության շրջանակներում հավասարակշռել է արտահատվելու ազատության և կրոնի ազատության իրավունքները:</p>
<p>Ընդհանրապես Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ու դրա վերաբերյալ Դատարանի որոշումների ուսումնասիրումը թույլ է տալիս եզրահանգել, որ այս Դատարանի հնարավոր դիրքորոշումն ու մոտեցումը կախված է յուրաքանչյուր առանձին դեպքի առանձնահատկություններից: Հետևաբար կողմերի համար հնարավորություն կա ոչ միայն հղում կատարել Դատարանի վճիռներին, այլ նաև Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի վճիռների տրամաբանության սահմաններում ներկայացնել իրավիճակի իրենց գնահատականը, հաշվի առնելով Հայաստանի պատմական եւ մշակութային առանձնահատկությունները: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը հանդիսանում է այն ոլորտը որտեղ առավել քան դրսևորվում է</p>	<p>Կառավարությունը պետք է պնդի, որ Կոնվենցիան կրոնի ազատության իրավունքի հետ միասին երաշխավորում է նաև արտահայտվելու ազատության իրավունքը և որ պետության պարտավորությունն է արդարացի հավասարակշռություն ապահովել այդ երկու իրավունքների միջև: Կառավարությունը կարող է պնդել, որ երբևէ իր գործողություններով կամ անգործությամբ չի ստեղծել իրավիճակ, որով կխաթարվեր հանդուրժողականությունը կամ բազմակարծությունը: Կառավարությունը պետք է պնդի, որ դիմումատուի եւ կազմակերպության անդամների համար խոչընդոտներ չեն եղել կրոնի ազատության իրենց իրավունքը իրականացնելու ու մասնավորապես իրենց</p>

<p>Կոնվենցիայի «Կենդանի մարմին» լինելու փաստը:</p> <p>Դիմումատուին նախ և առաջ հստակ պետք է տարանջատի կրոնի ազատության իրավունքի երկու հիմնական բաղադրիչները՝ կրոն և համոզմունք ունենալու, ինչպես նաև այն փոխելու իրավունքը, և իր կրոնական համոզմունքներն ու գաղափարները ազատորեն արտահայտելու իրավունքը: Ընդ որում, այս գործում շեշտադրումը պետք է հստակ դրվի համոզմունքները և գաղափարները ազատորեն արտահայտելու իրավունքի վրա:</p> <p>Այդ տեսանկյունից, դիմումատուին պետք է խոսի պետության դրական պարտավորության մասին առ այն, որպեսզի ապահովվի կրոնի ազատության իրավունքի իրականացումը բազմակարծության և հանդուրժողականության մթնոլորտում:</p> <p>Օգտակար կլինի եթե դիմումատուին կարողանա վերլուծել հողվածի տեքստը և վերհանի ու դատարանին մատնանշի այն հիմնական արտահայտությունները կամ մտքերը, որոնք կհիմնավորեն իր պնդումները. սակայն կարևոր է, որպեսզի դիմումատուին խուսափի խնդրի քննարկումը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի դաշտ տեղափոխելուց, քանի որ տվյալ դեպքում նրա խնդիրը չի կայանում հողվածի տեքստի վիրավորական բնույթի ապացուցման մեջ:</p> <p>Դիմումատուին պետք է այնուհետև հստակ ձևակերպի, որ հողվածի քննադատությունը անցել է թույլատրելի սահմաններն և արդեն վտանգում է իր համոզմունքների ու գաղափարների ազատորեն արտահայտման իրավունքը և հետևաբար պետությունն անգործություն ցուցաբերելով, այս դեպքում չի կատարում իր դրական պարտավորությունը, ինչը պետության համար որոշակի պատասխանատվություն է առաջացնում:</p> <p>Դիմումատուին պետք է ուշադրություն դարձնի և անդրադառնա այն հնարավոր բացասական հետևանքներին, որոնք, հողվածի տպագրման արդյունքում կարող են առաջանալ իր համբավի ու գործունեության համար: Ընդ որում, կարևոր է, որպեսզի դիմումատուին պնդի, որ տվյալ դեպքում պետության դրական պարտավորության ծագման համար բավարար է այդպիսի հետևանքների առաջացման հնարավորությունը և պարտադիր չէ, որ հետևանքներն իրականում տեղի ունենան</p>	<p>և համոզմունքները և գաղափարները ազատորեն արտահայտելու հարցում: Մինևույն ժամանակ գոյություն չեն ունեցել որևէ իրավաչափ հիմքեր, սահմանափակելու համար լրագրողի ազատ արտահայտվելու իրավունքն ու կազմակերպության գործունեության ու նրանց հավատքի ու համոզմունքների վերաբերյալ հանրության տեղեկացված լինելու իրավունքը:</p> <p>Կառավարությունը պետք է հիմնավորի, որ հողվածի բովանդակությունը ու դրանում հնչած քննադատությունը եղել են թույլատրելի սահմաններում, որ հողվածը գրվել է նույն այդ կազմակերպության նախկին անդամի կողմից, ով ընդամենն իր կարծիքն է արտահայտել՝ առանց ցանկություն ունենալու վիրավորել կազմակերպության անդամներին կամ վնասել կազմակերպության համբավին:</p> <p>Կառավարությունը պետք է ընդգծի, որ դիմումատուին, կազմակերպությունը կամ դրա անդամները զրկված չեն եղել զանգվածային լրատվության միջոցներով իրենց կարծիքն արտահայտելու իրավունքից և օրինակ, կարող էին նմանատիպ քննադատությամբ հանդես գալ նաև հողվածի հեղինակի վերաբերյալ:</p> <p>Կառավարությունը կարող է նաև հղում կատարել Հայաստանի պատմական, կրոնական ու մշակութային առանձնահատկություններին, նշելով Հայ Առաքելական եկեղեցու դերի մասին և այն, որ հայ ժողովրդի մեծ մասը հենց Առաքելական եկեղեցու հետևորդներ են և թե ինչ մեծ հետաքրքրություն ու ռեզոնանս է առաջացնում հանրության մոտ այլ հավատքը:</p> <p>Այս կապակցությամբ կառավարությունը կարող է մատնանշել, որ ցանկացած կրոնի հետևորդ պետք է պատրաստ լինի ընդունելու իրեն ոչ գաղափարակից անհատի կամ խմբի քննադատությունը, մինևույն ժամանակ իրավունք ունենալով ինքը ևս քննադատությամբ հանդես գալու:</p> <p>Կառավարությունը պետք է պնդի նաև, որ ինքը հենց ազատ արտահայտվելու իրավունքի արդյունավետ իրականացման ապահովման իր դրական պարտավորությունն է կատարել և որ հողվածի տպագրման արգելքն է որ Կոնվենցիայի խախտում կառաջացներ առնվազն 10-րդ հոդվածի մասով:</p> <p>Ընդ որում, Կառավարությունը կարող է նաև պնդել, որ հողվածի տպագրման արգելքը նույն կերպ կարող է մեկնաբանվել որպես</p>
---	--

<p>լինեն:</p> <p>Բացի Պատասխանող մասնակից պետության դրական պարտավորության խնդրից, դիմումատուին նաև պետք է պնդի, որ Դատարանի կողմից հողվածի տպագրությունը չարգելելն ինքին միջամտություն է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքի իրականացմանը:</p> <p>Դիմումատուին մասնավորապես պետք է հիմնավորի, որ հողվածի ոճը, որով նկարագրվում են դիմումատուի համոզմունքները, կրոնը և կրոնական կազմակերպությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ և դա ինքնին միջամտություն է կազմակերպության անդամների համոզմունքները և գաղափարները ազատորեն արտահայտելու իրավունքի իրականացմանը: Դիմումատուին պետք է պնդի և փորձի հիմնավորել, որ հողվածի նպատակը ոչ թե քննադատությունը, այլ հասարակության շրջանում կրոնական կազմակերպությանը ու կրոնը արատավորելն է, որն էլ իր հերթին կփոխի հասարակության վերաբերմունքը դեպի Կրոնական կազմակերպությունն ու կրոնը:</p> <p>Դիմումատուին նաև պետք է անդրադառնա միջամտության իրավաչափության որոշման թեստին և պնդի, որ նման միջամտությունը չի հետապնդում ոչ մի իրավաչափ նպատակ ու անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Դիմումատուին վերջապես պետք է պնդի ու հիմնավորի որ չկան որևէ փաստեր, որ իրենց կազմակերպության գործունեությունը կամ իրենց գաղափարները որևէ վտանգ են ներկայացնում հասարակության կամ նրա անդամների համար:</p>	<p>դիմումատուի կրոնի ազատության իրավունքի խախտում՝ կիրառելով նույն տրամաբանությունը ինչ որ փորձում է կիրառել դիմումատուին: Առավել ևս, որ տվյալ դեպքում խոսք է գնում հասարակության գերակշիռ մասի կրոնական համոզմունքների ու գաղափարների արտահայտման մասին:</p> <p>Այսպիսով Կառավարությունը կարող է պնդել, որ բացակայում է միջամտությունը դիմումատուի՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրականացմանը, քանի որ դիմումատուին զրկված չի եղել իր կրոնական համոզմունքներն ազատորեն արտահայտելու իրական հնարավորությունից և որ հողվածի տպագրումը չարգելելը Կոնվենցիայով հավասարապես երաշխավորվող երկու իրավունքների միջև արդարացի հավասարակշռության ապահովումն է եղել:</p> <p>Մինևույն ժամանակ, Կառավարությունը պետք է պատրաստ լինի նաև հիմնավորել ենթադրյալ միջամտության իրավաչափությունը, անցկացնելով սույն փաստաթղթի III-րդ մասում բերված թեստը: Մասնավորապես, կառավարությունը կարող է պնդել, որ հողվածի տպագրումը չարգելելով, ոչ մի օրենք չի խախտել, և որ պետական մարմինների բոլոր գործողությունները կատարվել են օրենքի տառին ու պահանջներին համապատասխան:</p> <p>Կառավարությունը կարող է նաև պնդել, որ հողվածի տպագրումը չարգելելը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ պաշտպանել այլոց իրավունքները և ազատությունները, տվյալ դեպքում լրագրողի արտահայտվելու ազատության և հանրության՝ տեղեկացված լինելու իրավունքները:</p> <p>Կառավարությունը, այդ թվում նաև հիմնվելով Չայաստանի մշակութային, կրոնական և պատմական առանձնահատկությունների վրա, պետք է հիմնավորի, որ իր գործողությունները անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում, քանի որ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• եղել է սոցիալական սուր պահանջ. օրինակ՝ դիմումատուի կրոնական կազմակերպության ու կազմակերպության անդամների դավանած հավատքի ու համոզմունքների մասին տեղեկացված լինելու անհրաժեշտությունը,</li> <li>• և որ հողվածի տպագրումը չարգելելը</li> </ul>
--	--

	<p>համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին:</p> <p>Ի վերջո, Կառավարությունը կարող է նաև հիշատակել հայեցողության իր իրավունքը, մատնանշելով, որ կրոնի ազատության հարցերով այդ հայեցողության սահմաններն առավել լայն են, հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները:</p>
--	--

**2. «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ**

<p>Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից Կազմակերպության փաստաբանին նիստին մասնակցել չթույլատրելը հանգեցրել է կողմերի հավասարության սկզբունքի խախտման, քանի որ դիմումատուն դատարանում պատշաճ կարգով ներկայացված չի եղել. հետևաբար խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքը</p>	<p>Հայաստանի Հանրապետության Կառավարությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքի խախտում առկա չէ, քանի որ ինչպես Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում, այնպես էլ մյուս դատական ատյաններում, դիմումատուն օգտվել է դատարանում իրեն անձամբ պաշտպանելու իրավունքից, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր որոշումները կայացնելիս առաջնորդվել է օրենքի տառով:</p>
<p>Դիմումատուն պետք է հիմնական շեշտը դնի դատարանի մատչելիության իրավունքի, կողմերի հավասարության սկզբունքի և մրցակցային դատական քննության իրավունքի վրա:</p> <p>Դիմումատուն պետք է պնդի, որ Կրոնական կազմակերպությունն իրավաբան չունի և որ գործի բարդությունն ու առանձնահատկությունները թույլ չեն տալիս առանց փաստաբանի արդյունավետորեն պաշտպանել ու ներկայացնել Կազմակերպության իրավունքներն ու շահերը:</p> <p>Դիմումատուն նաև պետք է նշի իրավաբան և ներկայացուցիչ ունենալու ու իրավաբանի և ներկայացուցչի ազատ ընտրության իր իրավունքի մասին:</p> <p>Այդ պարագայում ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում ներկայացուցիչ չունենալու հանգամանքը դիմումատուի համար գործնականում նշանակել է, որ Կրոնական կազմակերպությունն իր իրավունքներն ու շահերը</p>	<p>ՀՀ Կառավարությունը ներկայացնող թիմը նախ և առաջ պետք է պնդի որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքի իրականացման սահմանափակում տեղի չի ունեցել. մասնավորապես դիմումատուին չի արգելվել փաստաբան ունենալ դատական որևէ ատյանում:</p> <p>Այնուամենայնիվ, եթե դիմումատուն պնդում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում դատարանի կայացրած որոշումը սահմանափակում է իր իրավունքը, ապա Կառավարությունը կարող է պնդել, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների և այդ առումով պետություն ունի հայեցողության սահմաններ: Կարևորն այն է, ինչը և սույն դեպքում պահպանված է, որպեսզի այդ հայեցողությունը չխախտի արդար դատաքննության իրավունքի</p>

<p>գործնականում արդյունավետ ներկայացնել չի կարողացել: Այսինքն ակնհայտ է, որ նման պարագայում խախտվել է դատարանի մատչելիության իրավունքը Եվրոպական կոնվենցիայի իմաստով:</p> <p>Յետևաբար անիրական է դառնում նաև կողմերի հավասարության սկզբունքը ու բնականաբար նաև դատաքնության մրցակցային բնույթը, քանի որ մրցակցություն և հավասարություն չի կարող լինել երկու կողմերի միջև, որոնցից մեկը ունի որակյալ իրավական օգնություն ստանալու իրական հնարավորություն, իսկ մյուսը գործնականում զրկված է դրանից: Դիմումատու կարող է մատնանշել այն հանգամանքը, որը ընդհանուր իրավասության դատարանը ի օգուտ դիմումատուի է վճիռ կայացրել այն դեպքում, երբ այդ ատյանում գործը ներկայացնելիս Կազմակերպությունն ներկայացված է եղել փաստաբանների կողմից: Ինչ վերաբերում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանին, ապա այս դեպքում արդեն պարտվել է՝ փաստաբաններ չունենալու պատճառով:</p> <p>Անհրաժեշտ կլինի որ դիմումատուին հիշեցնի, որ դատարանը երաշխավորում է իրական ու գործնական իրավունքներ այլ ոչ թե տեսական իրավունքներ: Բնական է, որ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ելնել այն չափանիշից, արդյոք անձի իրավունքները գործնականում և իրականում արդյունավետ են իրականացվում կամ պատշապանվում թե ոչ:</p> <p>Դիմումատուին կարող է նաեւ պնդել, որ էական է այն, որ դիմումատուին չէր կարող էր իր գործը պատշաճ եւ արդյունավետ ներկայացնել ԶՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանում առանց փաստաբանի օգնության, հաշվի առնելով գործի բարդությունն ու առանձնահատկությունները:</p> <p>Դիմումատուին պետք է Եվրոպական դատարանի վճիռների իրավական վերլուծության արդյունքում հիմնավորել իր ներկայացրած պնդումներն ու տեսակետները: Այդ վճիռներից մի քանիսը մատնանշվել են սույն փաստաթղթի մաս II-ում:</p>	<p>եությունը:</p> <p>Կառավարությունը պետք է պնդի, որ դիմումատուին վերաքննիչ դատարանում ևս իրավունք ուն հնարավորություն է ունեցել ընտրելու փաստաբան և ներկայացված լինելու նրա կողմից, սակայն գործնականում ինքն է հրաժարվել այդ հնարավորությունից, քանի որ օրինակ կարող է ընտրել Փաստաբանների պալատում հավատարմագրված օտարկերկյա փաստաբանի կամ իր ընտրած օտարերկրյա փաստաբանին կարող էր խնդրել հավատարմագրվել Փաստաբանների պալատում, առավել ևս որ այդ գործընթացը դյուրին և կարճատև է: Կառավարությունը այդպիսով ցույց կտա, որ դիմումատուին ունեցել է մի շարք հնարավորություններ ունենալու փաստաբան, սակայն չի օգտվել դրանցից:</p> <p>Նախ անդրադառնալով դիմումատուի մատնանշած այն փաստին, թե ներպետական փաստաբանները հրաժարվել են իրեն ներկայացնել դատարանում: Կառավարությունը կարող է պնդել, փաստաբանական ինստիտուտը անկախ են պետությունից ու պետական մարմիններից: Փաստաբանի ու նրա հաճախորդի հարաբերությունները պետության կողմից չեն կարգավորվում և հետևաբար դրանց բնույթը, առկայությունը կամ բացակայությունը չի կարող պետական միջամտության առարկա լինել: Յետևաբար Կառավարությունը կոնվենցիայի այս հոդվածի իմաստով չի կարող պատասխանատվություն կրել կամ պարտավորություններ ունենալ, այն դեպքում, երբ որևէ փաստաբան հրաժարվում է որևէ հաճախորդի շահերը դատարանում ներկայացնելուց:</p> <p>Մյուս կողմից, Կառավարությունը պետք է մատնանշի, որ կողմերի հավասարության սկզբունքը իրոք ենթադրում է կողմերի միջև հավասարություն. վերաքննիչ դատարանը միակերպ է մեկնաբանել օրենքը երկու կողմերի համար էլ: Կառավարությունը կարող է պնդել, որ դիմումատուի պահանջի բավարարման դեպքում է որ կարող էր խոսք գնալ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքնության՝ արդեն մյուս կողմից իրավունքի խախտման մասին, քանի որ դատարանն ուղղակիորեն կխախտեր օրենքի նորմը:</p> <p>Այնուամենայնիվ, կառավարությունը կարող է</p>
--	--

պնդել, որ ենթադրյալ «սահմանափակումը» նախատեսված է եղել օրենքով: Բացի դրանից, այդ «սահմանափակումը» չի խախտել արդար դատաքննության իրավունքը կամ դատարանի մատչելիության սկզբունքը, քանի որ ի թիվս այլոց, օրինակ՝

- ՀՀ վերաքննիչ դատարանն ըստ էության գործը քննում է այն ծավալով որը քննվել է ընդհանուր իրավասության դատարանում, նոր ապացույցներ կամ հանգամանքներ չեն քննարկվում կամ հաշվի առնվում. այսինքն գործն ըստ էության արդեն քննվել է ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ դիմումատուն ներկայացված է եղել իրեն ցանկալի եղած փաստաբանների կողմից.
- դիմումատուն կարող է ընտրել ցանկացած փաստաբանի, այդ թվում նաև օտարերկրյա, ով բավարարում էր օրենքով սահմանված չափանիշներին և դա լիովին կերաշխավորեր արդար դատաքննության իր իրավունքը. Կառավարությունը կարող է պնդել, որ Եվրոպական դատարանի արդար դատաքննության իրավունքը չի մեկնաբանվում որպես կոնկրետ փաստաբանի ընտրության իրավունք.
- Կառավարությունը կարող է նշել, որ ոչինչ չի արգելել դիմումատուին, որինակ վերաքննիչ բողոքի իր պատասխանը պատվիրել ու ստանալ հենց այն փաստաբաններից, որոնց ինքը ցանկանում էր ներգրավել գործում և գրավոր պատասխանը ներկայացնել դատարանին իր անունից. հատկապես հաշվի պետք է առնել այն փաստը, որ ՀՀ վերաքննիչ դատարաններում որպես կանոն քննությունը տեղի է ունենում վերաքննիչ բողոքի և պատասխանի շրջանակներում, երբեմն նաև առանց բանավոր երկարատև քննարկումների, քանի որ ինչպես նշվեց նոր ապացույցներ կամ փաստական հանգամանքներ վերաքննիչ դատարանը չի դիտարկում.

Կառավարությունը պետք է նշի, որ այն հանգամանքը, թե դիմումատուն հաղթել է ընդհանուր իրավասության դատարանում ունենալով փաստաբաններ, ամեն դեպքում չի կարող վկայել այն փաստը, որ գործը պարտվելու պատճառը փաստաբանների

	բացակայությունն է եղել, քանի որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքը չի ենթադրում պարտադիր կերպով անձի պահանջի դրական լուծում դատարանի կողմից:
--	--

**3. «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերի հնարավոր պնդումներն ու փաստարկները Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ**

<p>Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի եւ հայտարարի, որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունը, քանի որ դիմումատուի՝ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտումները պայմանավորված են եղել Կազմակերպության կրոնական առանձնահատկություններով ու Կազմակերպության անդամների՝ տվյալ կրոնի հետևորդ լինելու հանգամանքով:</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում առկա չէ, քանի որ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված դիմումատուի իրավունքների խախտումները պայմանավորված չեն եղել Կազմակերպության կրոնական առանձնահատկություններով ու Կազմակերպության անդամների՝ տվյալ կրոնի հետևորդ լինելու հանգամանքով:</p>
<p>Պետք է հաշվի առնել, որ Կոնվենցիայի այս հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման առկայությունն ապացուցելը գործնականում կարող է բավական բարդ խնդիր լինել, նախ այն առումով, որ ապացուցման հիմնական բեռը դրվում է դիմումատուի վրա: Բացի դրանից, ապացույցների, առավել ևս ուղղակի ապացույցների, ձեռք բերումը ևս գործնական բարդ խնդիրների հետ է կապված: Կոնվենցիայի 14-րդ հոդվածի շրջանակներում իր փաստարկները, դիմումատուն պետք է տարանջատի Կոնվենցիայի երկու հոդվածների տեսանկյունից՝ 9-րդ և 6-րդ հոդվածների: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած նրան, որ ներպետական փաստաբանները հրաժարվել են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում դիմումատուի շահերը ներկայացնելուց և տվյալ դեպքում պետության ուղղակի միջամտությունը բացակայում է, դիմումատուն պետք է անցկացնի Կոնվենցիայի 14-րդ հոդվածի կիրառելիության վերը բերված թեստը: Դիմումատուն պետք է մատնանշի, որ ՀՀ</p>	<p>Կառավարությունը պետք է նկատի ունենա, որ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտման առկայության ապացուցման պարտականությունը կրում է դիմումատուն. այս առումով Կառավարությունը հնարավորություն ունի մատնանշել դիմումատուի փաստարկների թույլ կողմերը՝ դրանք արդյունավետորեն օգտագործելով իր օգտին: Կառավարությունն ամեն դեպքում կարող է պնդել, որ օտարերկրյա փաստաբանի մասնակցությունը վերաքննիչ դատարանում արգելելը եղել է օրենքի պահանջը: Կառավարությունը պետք է նշի, որ ներպետական դատարանների որոշումներում որևէ տեղ չես հանդիպի այՖպիսի հիմնավորման կամ փաստարկի, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիմք կտա ենթադրելու, թե այդ որոշումը պայմանավորված է Կազմակերպության անդամների կրոնական հանգումներով ու Կազմակերպության գաղափարախոսությամբ: Կառավարությունն պետք է պնդի նաև, որ</p>

<p>վերաքննիչ քաղաքացիական դատարանի համար պարզ է եղել այն փաստը, որ ոչ մի տեղացի փաստաբան հանձն չի առել ներկայացնելու դիմումատուի շահերը դատարանում եւ օտարերկրյա փաստաբանը միակ հնարավորությունն է եղել դիմումատուի համար ունենալ ներկայացուցիչ եւ իր իրավունքներն ու շահերը արդյունավետ ներկայացնել դատարանում: Եվ դիմումատուի խնդիրը պետք է լինի ցույց տալ, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, որի արդյունքում ինքը զրկվել է փաստաբանի կողմից ներկայացված լինելու հնարավորությունից, պայմանավորված է եղել միայն և միայն կրոնական առանձնահատկություններով ու Կազմակերպության անդամների՝ տվյալ կրոնի հետևորդ լինելու հանգամանքով, իսկ օրենքի նորմն ընդամենը միջոց է հանդիսացել. այսինքն, օրինակ, եթե խոսքը վերաբերեր Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ անձի, ապա դատարանի դիրքորոշումն այդպիսին չէր լինի: Հետաքրքիր և օգտակար կլինի, որպեսզի դիմումատուն, օրինակ, վիճակագրական վերլուծություն իրականացնի «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի առումով և դրա արդյունքները փորձի օգտագործել իր փաստարկները հիմնավորելու համար:</p> <p>Կոնվենցիայի 9-րդ հոդվածի կապակցությամբ դիմումատուն ևս խնդիր ունի ապացուցելու, որ ներպետական դատարանների դիրքորոշումը կապված հոդվածի տպագրման հետ պայմանավորված է բացառապես այն հանգամանքով, որ Կազմակերպության անդամների կրոնական հանոզումները և Կազմակերպության գաղափարախոսությունը տարբերվում են հասարակությունում գերիշխող կրոնական հանոզումներից: Դիմումատուն պետք է պնդի, որ եթե այդ հոդվածը վերաբերեր ասենք օրինակ Հայ Առաքելական Եկեղեցուն և նմանատիպ քննադատություն պարունակել դրա հանդեպ, ապա հոդվածի տպագրումը անպատճառ կարգելվեր:</p> <p>Դիմումատուի համար այս դեպքում ևս օգտակար կլիներ վիճակագրական ուսումնասիրություններ իրականացնել և դատարանին ներկայացնել տվյալներ առ այն, թե</p>	<p>Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով, դատարանը պարտավորություն չի կրում պարտադրել որևէ փաստաբանի ներկայացնելու այս կամ այն կողմին, առավել ևս, որ փաստաբանն անկախ է պետությունից և ազատ է իր գործունեության իրականացման ընթացքում: Ինչ վերաբերում է օտարերկրյա փաստաբանի մասնակցության սահմանափակմանը, ապա ներպետական մարմինները պարտավոր են օրենքի նորմը միատեսակ կիրառել բոլորի հանդեպ և որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում դիմումատուի պահանջի բավարարումն էր, որ կհանդիսանար խտրականություն:</p> <p>Կառավարությունը ևս կարող է վիճակագրական վերլուծություն իրականացնել ու փորձել ցույց տալ, որ Հայաստանում բոլոր կրոնների հետևորդները գտնվում են հավասար պայմաններում ու նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք չի դրսևորվում ո՛չ օրինակ իրենց կազմակերպությունները գրանցելու, ո՛չ իրենց հանոզումները ազատորեն արտահայտելու և ո՛չ էլ որևէ այլ իրավունքների իրականացման առումով:</p> <p>Վիճարկվող հոդվածի տպագրումը չարգելելու որոշման կապակցությամբ, Կառավարությունը կարող է կրկին նշել, որ ներպետական դատարանների որոշումներում հնարավոր չէ գտնել որևէ դրույթ կամ փաստարկ, որը թույլ կտար նույնիսկ անուղղակիորեն ենթադրել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման ընդունումը պայմանավորված է եղել Կազմակերպության անդամների կրոնական հանոզումներով:</p> <p>Կառավարությունը կարող է նշել, որ ներպետական դատարանները նպատակ են ունեցել միայն ապահովելու արդարացի հավասարակշռություն մի կողմից Կազմակերպության անդամների և մյուս կողմից լրագրողի ու հանրության իրավունքների միջև: Կառավարությունը պետք է պնդի, որ ինքը ձեռնարկում է բոլոր քայլերը Հայաստանում բազմակարծությունը և խոսքի ազատությունը երաշխավորելու համար:</p> <p>Միևնույն ժամանակ Կառավարությունը գործնականում երաշխավորում է նաև յուրաքանչյուր անձի կողմից իր կրոնական հանոզումներն ազատ արտահայտելու հնարավորությունը, իսկ վիճարկվող հոդվածը</p>
---	---

<p>Չայաստանի զանգվածային լրատվության միջոցներում ինչ հաճախականությամբ են հանդիպում Չայ Առաքելական Եկեղեցու կամ քրիստոնեության ուսմունքի եւ այլ կրոնների վերաբերյալ քննադատական հոդվածներ: Դիմումատուն պետք է ցույց տա եւ հիմնավորի, որ այս իրավիճակը խտրականության դրսևորում է:</p>	<p>հենց այդպիսի արտահայտության միջոց է եղել: Կառավարությունը պետք է պնդի, որ խտրականության մասին կարելի էր խոսել միայն այն դեպքում, եթե Կրոնական կազմակերպության անդամների կրոնական համոզմունքներն արտահայտելու իրավունքի իրականացմանը միջամտություն լիներ:</p>
---	---